«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 170^{7}-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 170^{7}. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների և (կամ) հսկիչ (նույնականացման) նշանների օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով և (կամ) հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքներ դրոշմավորելը

Սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները և (կամ) հսկիչ (նույնականացման) նշաններն օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում հիսուն հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի և (կամ) հսկիչ (նույնականացման) նշանի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները և (կամ) հսկիչ (նույնականացման) նշանները օտարելը, եթե դրանց քանակը գերազանցում է հիսուն հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի և (կամ) հսկիչ (նույնականացման) նշանի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով և (կամ) հսկիչ (նույնականացման) նշանների ապրանքներ դրոշմավորելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով և (կամ) հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքներ դրոշմավորելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 170.8-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 244.2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «170^{8},» թիվը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: